


# ԱՌԱՋԻՆ ԴԱՐ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆՑ



**Յ**ԱՅԿԱԿԱՆ տպագրութեան նախկին շրջանն մինչև վերջին օրերս կը հաւատացուէր ընդհանրապէս՝ որ իւր սկզբնաւորութիւնն ունեցած լինէր վեշտասաներորդ դարուն երկրորդ կիսուն մէջ, և յատկապէս յամին 1565, որոյ հետ սերտ կապակցեալ են երախտաւոր անուանքն Միքայելի Դ. կաթուղիկոսի, Արգարու Դպրի, Հռովմայ և վենետիկի Որչափ որ այդ պատմութեան վրայ յեցեալ համազումն հասարակաց էր, այլ եղան ոչ բազումք՝ որք տարակոյս յարուցին թէ ոչ արդեօք գուցէ և յառաջ քան զվերոյիշեալ թուականն՝ հայկական տպագրութիւնք եղած լինին:

Առաջինն եղաւ Յոշիկը Հայրենեաց գրոց Հեղինակն, որ քայլ մի ևս յառաջ անցաւ քան զլոկ կարծեաց ասպարէզն, և Աղքաւոր կոչուած անթուական՝ բայց բարեբախտ դիպուածով լուսանցից մէջ գրչադրեալ թուակիր (ՌԱ — 1552) գրքէ մի հետեւցուց՝ որ այդ յիշեալ մատենադ ոչ միայն անդրանիկ եղած պէտք է լինի քան զծանօթ Արգարեան Սաղմոսն, այլ և գուցէ տպագրուած նոյն քան զ1500 թուական. բայց թէ որոյ ձեռք, երբ և կամ ուր, մինչև ցայսօր դեռ զաղտնիք մնացեր է:


Վերոյիշեալ Մեծարգոյ Հեղինակին դիտողութիւնն (Տես Յոշիկը Հայրենեաց, Բ. հտր. էջ 521) գրեթէ ստուղութեան մերձեցաւ, երբ վերջերս Գերարգոյ Մխիթարեան Հարց Վիէնայի Ամսօրեայ Հանդէսն կ'աւետէր 1512 թուականին (ոչ անհաւանելի տրամաբանական հետեանք) տպագրուած՝ հայ մամուլն իբրև միակ և ցայն վայր գիտնական աշխարհի անծանօթ երախայրեաց գիւտն, 'ի մատենադարանի վերոյիշեալ Հարց, Տօնացոյց մի, առանց որ և իցէ ծանօթութեան ուր, երբ կամ որոյ ձեռնարկութեամբ տպուած լինելուն:

Բարեբախտաբար այդ Տօնացոյցն, թէպէտ և միակ (գէթ մինչև ցայսօր) յիւրում սեռի, այլ ոչ միակ և յանդրանկութեան համարելի է. վասն զի արդիւնք է նոյն այն տպագրատան, ուստի բոլոր են մեր քաջն եղած Աղքաւոր և Ռաբարազիրք երկու տպագրութիւններն. որք իրենց համեղքօր Տօնացոյց մատենին հետ միացած, գէթ մինչև ցնորոգ յայտնութիւն քան զիրենք ևս ծերագոյն ծննդոյ, պիտի համարուին հայ տպագրութեան նախկին եռա-յաւայրիքն, հնութեան բոլորն ներքև ծածկած ունելով իրենց կենաց սկզբնաւայրը:

Յօկնացոյց մատենին վրայ մանրամասն ծանօթութիւն կրնան գտնել բանասէրք վերոյիշեալ Ամսօրեայ Հանդիսի մէջ (1889, թիւ 10) . մեր նպատակն պէտք է լինի ուրեմն նաև Աղքարք և Ոյրքարք գիրք գրող վրայօք ալ կարևոր տեղեկութիւններ աւանդել հետաքննողաց, և առաւելագոյն ինչ գործելու փափաքանօք, նոցա ոչ միայն մտքին՝ այլ և աչաց ներկայացընել այդ յիշեալ տպագրական երախայրեաց էջերէն մէկ քանին, այսու դիւրութիւն ընծայելով հետաքրքր. քրողաց բաղդատելու զայնս այլ հնատիպ հայ մատենից հետ, որք զուցէ գեռ ևս տատ անդ գտնուին :

### ԱՂԹԱՐԲ

Թէպէտ և Աղքարք կոչումն տրուած է գրքիս, այլ նորա մի մասն կը կազմէ Բժշկարան : Բոլոր գիրքն շէ ութմածալ թերթերէ կազմուած է, և այս թերթից թիւերն նշանակուած են կանոնաւորապէս հայերէն տառերով՝ Իւրաքանչիւր թղթի թուագրերով՝ այսպէս ա. — ա. ք. — ա. գ. — ա. դ. . . . . մինչև գ. — գ. ք. — գ. գ. այս վերջին թուա. գրէա վերջը կը պակասին թղթեր, որովհետև յաջորդ թուղթն կը նշանակուի ժ. գ. — ժ. դ. . . . . մինչև ժք. ք. : Կը պակասի նաև ժգ. և թուղթն, և կը շարունակուի ժգ. ք. — ժգ. գ. . . . . մինչև ժգ. ք. կանոնաւոր, իսկ յաջորդ թուղթն ժէ. ա. աւ. րուած է, և կամ փակցուցած նորագոյն և կամուտ թղթոյ մի հետ, որոյ վրայ նօտրա. ձև ձեռագագիր տառերով ընդօրինակուած է պակասաւոր էջը, Կանոնաւոր յաջորդութիւն ունին նաև ժէ. ք. — ժէ. գ. և այլն, մինչև ժէ. է. և կը պակսի դարձեալ ժէ. ք. թուղթն. բայց յաջորդքն ժք. ա. — ժք. ք. . . . . մինչև ի. գ. ուղիղ շարուած են. իսկ ի. դ. պակասաւոր թղթոյն տեղ՝ նորա պարու. ա. կութեան ընդօրինակութիւնն ազուցուած



Ձև 1.

է նօտրգիր. որոյ կը հետեւին ի. է. — ի. գ. — ի. է. և այլն, մինչև իա. դ. : Կը պակսին նմանապէս թուղթքն իա. է. — իա. գ. — իա. է. — իա. ք. — իք. ա. : Շարունակութիւնն իք. ք. և այլն, մինչև իդ. գ. ամբողջ կայ. կը պակսի իդ. դ. և վերջնոյս կը յաջորդեն առանց գրանշանի երկու թուղթք միայն որովք կ'աւարտի մատեանն, վերջըն. թեր երեսին վրայ կարմիր թանաքով զրոյմուած կրելով զայս նշան տպագրատան ( Ձև 1. ), նոյն ամենին ինչ որ Ամսօրեայ հանդէսն կը հաւաստէ զրոյմուած լինել նաև Յօկնացոյց մատենին մէջ, իսկ վերջին երեսին վրայ՝ թերթերուն տառանիչքն շարուած են չորս տողե.

րով ա<sup>ա</sup> մին, և զ' իդ, յաւելուածովս « Գիրքս բովանդակ ամէնն իդ տետր է, և ամէն տետր ը թուիթ է » :

Գրքին երկայնութիւնն է 16 հարիւրորդամետր, իսկ լայնութիւնն 10 հարիւրորդամետր :— Տպագրութեան շարքին մէջ քանի մը բառեր ձեռքով գրոյմուած են :

Իսկ պարունակած նիւթոց մասին կրնանք մենք ալ համաձայն Մեծ . Հ . Ղ . Ալիշանի հետ այլաբանօրէն գրուցել թէ « ձախ ձեռքի մը չօրհնած ընծայ կրնայ սեպուիլ . գիշերուան ծնունդ բան տուրն, քեան ... իտաւրատէր Ահրմէն մ' է, որ կ'աճապարէ 'ի դուրս գալ նախ քան զանուշահոտն և լուսաւոր Որմիզդ, որպէս զի յափշտակէ մտաց վրայ տիրապետութիւնը » :

Առաջին և երկրորդ էջերը վերնագիր ունին կարմրագեղով՝ Աղքատք արանց և կանանց . յորում նախ մէջ կը բերուին հնոց կարծիք՝ մարդկային բնաւորութեան զանազանութեանց մասին, ըստ իւրաքանչիւր կենդանակերպի՝ յորում ծնանին : Այս տեսութիւնս երկուքի բաժնուած է, այսինքն 'ի ձիւս և 'ի թերութիւնս կանանց, և 'ի ձիւս և 'ի թերութիւնս արանց, մի առ մի ըստ երկուտասան նշանաց կենդանակամարին :

Թ'էջն<sup>3</sup> 23 (թուղթ ք. և.) անվարժ գրչագիր մի կը գրոյմէ 'ի լուսանցս « թիւիլին ՌԱ. բար(ի) կենւօք Ճ Խօճայ. տապան թու վաթխանան », որ է ամն ֆրիստոսի 1452 : Այս խօճա անձն՝ իւր կնիքը գրոյմած է գրքին մէջ յ'էջ 83 (թուղթ զ. գ.) :— Աղթարքն կ'աւարտին կիսակատար, բայց ամենամերձ յաւարտն՝ յ'էջ 83, իսկ 84 էջն կը սկսի 'ի սկզբանէն պակասաւոր վիձակաց կամ քախտից շարք մը, 'ի գլուխս գլուխս բաժանեալ՝ յանուն զանազան առաքելոց և աւետարանչաց, և այլն, և կը ձգի մինչև յ'էջ 118 (թուղթ ժք. դ.) : Իսկ 119 երեսին վրայ գրոյմուած է կենդանակամարին խոշորագիծ հանդիպակաց պատկերն (2և 2) :


Պատկերին կը յաջորդէ Տարեցոյց մի, կամ յատկապէս խորագըրեալ Տանուտեխացոյց, յորում երկրիս զանազան կողմանց համար՝ բարւոյ կամ՝ չարի գուշակութիւնք կ'աւանդուին, ըստ իւրաքանչիւր փոփոխման արեգական ընթացից 'ի կենդանակերպս :— Այս գուշակութեանց էջերէն միոյն վրայ (թուղթ ժք. ը.) լուսանցից մէջ կը կարգանք ընտիր հին բոլորագրով գրուած . « Այս Աղթարքս Մուրա-

1. Այս Աղթարք քանի մի թերթերու՝ անշուշտ յատուկ գիտաւորութեամբ՝ մի կողման խորագիրք և զարդագիրք կարծիր թանաքով տպուած են, և միւս կողմանն սև թանաքով : Այս է պատճառն որ վերոյիշեալ տպագրական նշանն Աղթարքի մէջ կարմրագոյն գրոյմուած է, իսկ Ուրբաթագրոյց մէջ սևագոյն :

2. Ելերու կոչումն նորագոյն ժամանակաց ձեռքով գրոյմուած թիւերու համեմատ է, և ոչ թէ տպագրուած :

տինն է » , որ անյուշտ մատենիս հնադոյն ստացողաց մին պէտք է ելած լինի , նման վերոյիշելոյն խօնայի :

Վերոյիշեալ Տանուտէրսցոյցին կը յաջորդէ Ամսացոյցք աւելնայն եղականաց , որք նախըթացին նման բարւոյ և յարի գուշակութիւնք են՝ երկոտասան ամսոց վրայ բաժանուած , և կը ձգի մինչև



Ձև 2.

յէջ 167 (թուղթ ժե. գ.) . յորում կը սկսի կարմրագեղով նոր գլուխ մի՝ վերնագրովս . « Ուսմիմն իմաստասիրի ասացեալ յաղագս լուսնին աւուրցն , որ զերազն յայտնէ » . թէպէտ և աւանդուածն առասպելասիրի մ'ուղեղին ծնունդ է մանաւանդ քան թէ իմաստութեամբ խորհողի : — Նոյն այս երեսին վրայ գրոյմուած է ձեռօք ուրիշ նոր կնիք մի այլ ստացողի մատենին :

Այս երազացոյցս կ'աւարտի յէջ 177 (թուղթ ծգ. գ.) ուր կը սկսի նոր խորագրով. « Սրբոյն Կիրղի Հայրապետին ասացեալ է վասն կաղանդաց թէ զինչ լինիցի՝ եթէ կաղանդն 'ի կիրակի լինի » և այսպէս՝ եթէ երկուշաբթի, եթէ երեքշաբթի ... մինչև ցնձաբթի : Գրութիւն մի՝ որ ոչ միայն Կիրղի Հայրապետին անուան նախատրինք կը բերէ, այլ և ամենայն նախապաշարմունքէ ազատ եղող մտքի :



Ձև 3.

ինչ զարմանալի տգէտ և առասպելաց հաւատք ընծայող մտաց, — Թէջ 296 (թուղթ իդ. ե.) կ'աւարտի և՛ բժշկարանն և՛ մատենան վերոյիգեալ ազագրատան նշանով :

Սոյնպիսի գրութիւն մ'է նաև յաջորդ գլուխն յ'էջ 118 (թուղթ ծգ. գ.) « Վասն աստեղաց ցոլանալոյ » կոչուածն, և յաւելուածն՝ Յաղագս շարժմանց (իմա գիտնաշարժից) « որ են ցուցակ կամ նշանակք բարւոյ և չարի » : Ինչպէս և եօթնեկին ամէն մէկ աւուրց մէջ ծնած տղայոց համար գուշակութիւնքն, և Յողագոսնայոց և երկնիցն շարժմանց գլուխն, որ կ'աւարտի յէջ 194 (թ. ծէ. դ.) :


Մինչև ցայսօրայր յիշածներս գրքին երկու երրորդ մասը կը բռնեն, մինչև 195 երես, յո. ում կը սկսի Բժշկարանն ճալինոս (Գալիանոս) հաքիմի, խորագրաւ « Բժշկարան և հաքիմարան ըստոյգ և զարմանալի Մեծին ճալալիոս հաքիմին արարեալ », որոյ մէջ ընդ ստուգելիս՝ կամ լաւ ևս՝ ընդ ստուգելիս՝ իստոն գրոյմուած կայ նաև շատ

ՈՒՐԲԱԹԱԳԻՐՔ

Այս գրքիս տառերն, մեծութիւնն, զարդերն, և 'ի վերջ կոյս գրքին գրուած՝ մի և նոյն նշանն խաչազարդ, նոյնանիչ եւրոպական տառերով, ամենեկին տարակոյս չեն թողուր հաւատելու որ մի և նոյն տպագրատան արդիւնք է ընդ առաջնոյն թաց յարտաքին նշաններէ՝ զնոյն գրեթէ կրնանք հաստատել նաև նոցա պարունակած նիւթոց նկատմամբ, որք լի են ցնորաբան շաշիադիութեամբ, Գիրքն զխաւոր երկու մասն բաժնուած է, ինչպէս կը ցուցանեն նաև խորագրերն, որք ամէն մէկ երեսի վրայ կրկնուած են։ Առաջին մասն է յատկապէս Ռարաքա գիրք կամ Սոռք Ռարաք կոչուածն, իսկ երկրորդն որ կը տ'սի Աղոթք կիպրիանուսի վերնագրաւ, կը բովանդակէ զանազան գլուխներ, ինչպէս քիչ վերջը պիտի նշանակենք։

Տպագրութեան եղանակն և թերթերու բաժանմունքն նոյն են՝ ինչ որ տեսանք Աղարաք գրոյ մէջ. միակ տարբերութիւն կը տեսնուի յայտրմ՝ որ մինչդեռ Աղարաքի թերթերու մէկ բանիին վերնագիրք միայն սև թանաքով տպուած են, և կամ թերթին մի կողմն սև և միւսն կարմիր, ընդհակառակն Ռարաքա գրոյ թերթերուն խորագրերն առհասարակ կարմիր են, և վերջին երեսին վրայ գտնուած տպագրական նշանն՝ սև թանաքով է։

Առաջին (Ռարաթագրոց) մասն կը բովանդակուի 24 թղթերու մէջ, և 'ի սկզբան ունի հետեւեալ պատկերն (2և 3), յորում հայկա-



Ուրբաթաւրկամշորէք շաբթի տանին զհիւանդսի դուռն եկեղեցոյս։ Եւ ասեալ զարցի հաաղմոս մինչև երգործքս։ Եւ ապայասե հտատու երկու տրոդորմեայ. և ասեղաղաւմս։



արդամ քառքեզ ճայ  
րոսմերոյ յի քիտր  
զաւրութեանց որը  
զգազանսկապեցեր

Լզդիւացի հաւսում թիւ աղաա  
ապարտեցեր։ Մեծեպոստիւ  
Լանապատում յուսացե լոցսիքեզ  
Ըզկալաղաղաւսած յիցքոց  
Լզաղախնայից. Խոստողանի  
ա. բ.

2և 4.

կան արեղայի տարազն կ' երևի հիւանդի մօտ կանգնած : Այս պատ-  
կերն կրկնուած է նաև երկրորդ մասին սկիզբը, Բանասիրաց հետա-  
քննութեան համար կը ներկայացընեմք աստ նոյն պատկերին նաև  
հանդէպ գտնուած՝ առաջին երեսին նմանահանութիւնն, որով կա-  
րող կը լինին մեր ընթերցողք ճիշդ գաղափար ունենալ հայկական  
առաջին տպագրութեանց տառից ձևերուն (Ձև 4) :

Այս առաջին մասէն վերջը, որ բովանդակութիւն է կէս 'ի կէս անո-  
տիարան երգմանցուցական ձև երու ընդդէմ սատանայից, կախարդաց  
և դիւ թից, յէջ 49 կը սկսի երկրորդ մասն՝ Աղօթք Ս. Եփրատիսնուի,  
« զոր ասացեալ է վասն դիւաց և կախարդաց և աղանդոց » , հանդերձ  
կանխաբանով մի՛ յորում ինքն Եփրատիսնոս կը պատմէ իւր կախար-  
դական հնարքները, զորս 'ի գործ կը դնէր յառաջ քան զգարձն 'ի  
քրիստոնէութիւն. և կ'աւարտի այս աղօթքս յէջ 54 (Թուղթ դ. գ.)  
հետեւեալ բառերով. « Եւ ամենայն կապեալք արձակումն առցեն .  
վեցհազար ու վեցհարիւր և եւթմանասուհւերկու աղանդս կանանց  
և կախարդաց և չարաչից և չարեզուաց . և ամենայն որոգայթ ար-  
ձակեալ և հեռացեալ եղիցի 'ի ծառայէս Աստուծոյ » Մարտիրոսին  
Այս վերջին անունս գրուած է ձեռքով նօտրագիր, որ կը ցուցը-  
նէ զստացողն մատենին . որ  
ոչ միայն այս տեղ, այլ նաև  
ամէն մէկ մաղթողական ա-  
ղօթից վերջը գրուած է, և  
ուրիշ տեղ ալ յատկապէս 'ի  
վերջ կոյս գրքին՝ յէջ 108  
(Թուղթ գգ. ը.) զլսագիր  
տառերով կը գրուածի, ինչ-  
պէս կ'երևի, 'ի տպագրողէն  
կամաւ սպիտակ թողուցած  
տողի մէջ՝, այս ձևովս .

Բն անձեկեալի  
Երամենազարաւ քահալածեա  
ցգդեան : Լի ուրբեալսնսն  
աւետարանն . աւգնականս  
պահապանս իցիծառայիսայ :  
ՄԱՐԾԻՐՈՍԻՆ  
ԿԵՐԱՄԱՆԱՄԻՆԱԷՂԵԳԻ :

Այս պարագայս այնպէս  
կարծել կու տայ թէ գիրքն  
տպագրողին համար պիտի ծառայէր իբր սոսկ շահադիտութեան աղ-  
բիւր մի, օգտուելով ժամանակին բարեմիտ կամ լաւ ևս՝ Թերամիտ  
ջերմեռանդներէն, որք հաւատք կ'ընծայէին առասպելանուն դիւաց  
կամ հրէշից և զօրութեանց, իբրև կարողք ըստ կամս 'ի չարչարել  
զմարդիկ նաև յետ փրկագործութեան Բանին Աստուծոյ :

Ի վերջ մաղթանաց Եփրատիսնուի, յէջ 54 (Թուղթ դ. գ.) կը գրու-  
մուի Պատմութիւն Գոռատիանէ Կոռսին, որ է համառօտիւ յիշատա-

1. Կը գտնուի մի և նոյն թերթին Եւրիշ առանձին օրինակ մ'ալ մեր քով,  
յորում յիշուի սպիտակ թուղուած է Մարտիրոս անդան տեղն :

կութիւն դարձի Ս. Կիպրիանոսի, և կ'աւարտի յէջ 60 (Թուղթ դ. զ.), ուր կը սկսի նոր խորագրով Մաղքանք առ անկեանս տառքս Աստուծոյ, որ շարք մի է սնունան ամենայն սրբոց, որոց բարեխօսութիւնն կը հայցուի ստորագրեալ գրոց ստացողին համար, որ մեր օրինակին մէջ վերոյիշեալն Մարտիրոս է:


Կը շարունակուի դիրքն, յէջ 71 (Թուղթ և. դ.), Նարեկացւոյն « Որդի Աստուծոյ կենդանւոյ » ծանօթ երեկոյին աղօթիւք, որոյ կը յաջորդեն յէջ 74 (Թուղթ և. և.) հետեւեալ տողերն, Աղօթք պահպանութեան վերնագրով. « Եւ ես յա՛ննայն ժամ զայս ասեմ » թէ հա՛նապաղ այս գիրքն 'ի գրկիս, աստուածաբան 'ի բերանիս, ձեռագիրն 'ի ճակատիս, այս սէրս սէր է իմ սրտիս, և անմոռաց 'ի յիմ մօտիս: Մարմինս տուն է տէրունի, միտքս նման սուրբ քահանի, սիրտս տեղի ուրբ սեղանի, խորհուրդս անարատ պատարագի, աղօթքս խունկ ընդունելի: — Հայրն բերդ անձինս ամուր, Որդին պարիսպ մտացս ամուր, Հոգին զուռն հոգոյս ամուր. արդ ես յուսմէ սարսեալ զողամ: — Արդ երգումն տամ վկայութեամբ սուրբ գրոյս այսորիկ զոր զրեցաք. ուր լինի գիրս և ուր վարդացի, ոչ մերձենայ 'ի տուն այն չար և ոչ որոգայթ, ոչ 'ի այր մարդ և ոչ 'ի կին, ոչ 'ի ծեր և ոչ 'ի տղայ, ոչ երիտասարդ և ոչ 'ի կուսան, ոչ 'ի մէն կենայն և ոչ 'ի ճանապարհի. այլ կապած է ամենայն չար 'ի զէմ ծառայիս Աստուծոյ Մարտիրոս սինն: Որով յայտնի կը տեսնուի որ այս գիրքն իբրեւ յուսումնական մի պիտի ծառայէր պարզամիտ ստացողին համար:

Այս մաղթանքէն վերջը դրոշմուած են չորս աւետարանք բժշկութեանց, մի մի յիւրաքանչիւր աւետարանչաց, որ կ'աւարտին յէջ 86 (Թուղթ զ. գ.):

Ի վերջ աւետարանացն՝ սպիտակ թողուած է մնացորդ կէս էջն. և յաջորդ թուղթն՝ որ պիտի լինէր զ. դ. կը պակասի. որով զ. և. թուղթն անվերնագիր շարունակութիւն է գողտրիկ զգլական աղօթքի մը, որ Աղաքք փոկաւորն կը մակագրի, և կը ձգի մինչև յվերջն թեր թուղթն (զ. է.) վեցերորդ թերթի, ուր կ'աւարտի փառատրութեամբ Ս. Երբորդութեան:

Աստ կը պակասին զ. ը. և է. ա. երկու թուղթք. վասն զի յէջ 109 կը գտնուի թուղթ մի նշանակեալ է. ք. Առձանարի այսգիր վերնագրով երգմենեցուցութեան պատառիկ մի, որոյ ինչպէս սկիզբն՝ այսպէս ալ աւարտն կը մնայ թերի, պակասելով յաջորդ թղթերն: Բայց ընդ մէջ այս վերջին թղթեկիս և նախընթացին (զ. է.) եկամուտ ամբողջ թերթ մի կազմուած է, որ հաւանօրէն ուրիշ գրքի կը վերաբերի, և պատահական կերպով այս տեղ մուտ գտեր է, վասն զի թերթին գրանշանքն են համրուած զգ. — զգ. ք. — զգ. գ. ... զգ. ը. վերջին, ուր կը գտնուի վերոյիշեալ Մարտիրոսին ստորա-


գրութիւնն : Բայց ինչպէս նախ ընթացաբար ըսինք՝ նոյն այս թերթիս  
ուրիշ օրինակ մ'ալ ունինք առանձինն, ըստ ամենայնի համաձայն



94 6.

Ուրբաթագրոց մէջ կազմուածին, բաց 'ԻՄարտիրոսին ստորագրու-  
թեան պակսութենէն, ուր սպիտակ մնացեր է:

Այս թերթիկս եթէ չուզենք ուրիշ հրատարակութեան մի մասն  
համարիլ, որոյ իբր ապացոյց կրնան ծառայել կրկնանիշ տառքն զգ. —



Ձև 7.

զգ. ք. և այլն, կրնանք ըսել նաև որ առանձին տետր մ'է, մի և նոյն  
տպագրատան (Աղծարբի և Ուրբաթագրոց) և ժամանակի արդիւնք,

զոր կը հաւաստեն տառից նոյնութիւնն և տպագրութեան ոճն, վերնագիր ունի «Վասն Գանի», իսկ սկզբնական խորագիրն կար. մրադեղով գրոշմուած է այսպէս. «Գիր ամենայն ցեղ գանի. Ա՛ռ պաւլոսաւոս գանակ, երեքբեռեռ(ա)ն, և տեառնագրէ 'ի վերայ վի. ըին, և ասէ զադ(աւթս) »: — Այս սնոտաբան աղօթից, որ զգեւս և զղիւթս կապելու ձև մ'է, կը յաջորդէ Սաղմոս մի, և ապա «Մաղթմանք առ պանչեւագործ սուրբ Նշանն Քրիստոսի Ոստուծոյ մերոյ», յորում կը յիշատակին Հայաստանի զանազան վանքերու և օտար աշխարհաց մէջ գտնուած ուխտի Սուրբ Նշաններն:

Ուրբաթագրոց վերջին երկու թղթերուն առաջին էջն կը պարու. նակէ «Գիր չար ակին» վերնագրով՝ աննշան պահպանութեան մաղ. թանք մի. իսկ երկրորդ և երրորդ էջերուն վրայ գրոշմուած են կար. գաւ նոյն մատենին էջերուն սկզբնական բառերն, թերթերուն կար. գըր ցուցանելու համար: Վերջին (երրորդ էջին վրայ) կը գտնուի նաև տպագրատան վերոյիշեալ խաչաձև նշանն, որով կ'աւարտի մատենան՝ չորրորդ էջն սպիտակ մնալով:

Այսպիսի ուրեմն ահաւասիկ տարօրինակ սկզբնաւորութեամբ հայկական տպագրութեան հիմն դրուեր է. տարօրինակ բառիւ կ'ուզեմ ակնարկել այս երկու գրոց պարունակեալ նիւթոց մասին, որոցմէ գուցէ օտարախորթ չլինի նաև պարունակութիւն Տօմարի կամ Տօնացուցին, որոյ վրայօք կը խօսի վերոյիշեալ Ամսօրեայ Հանդէսն, թէպէտ և առանց մանրամասն մէջ բերելու նորա պա. րունակեալ նիւթոց կարգն և արժէքն: Մեզ բաւական է առ այժմ հաւաստեալ ասել՝ որ Տօնացոյցն ևս մի և նոյն ձախող մտքի և ժամանակի երկունք է, ինչպէս Աղթարքն և Ուրբաթագիրքն. բա. ւական է իբրև ապացոյց մեր ընթերցողաց առջև դնել նաև Տօնա. ցուցի հետեւեալ երկու էջերու նմանահանութիւնն, զոր ըստ մեր խնդրանաց՝ Մեծ. Մխիթարեան Հարք Վիեննայի բարեհաճեցան ու. ղարկել մեզ (Ձև 6 և 7), յորում ոչ միայն տառից նոյնութիւնն ընդ Աղթարքի և Ուրբաթագրոց ըսածնիս կը հաւաստեն, այլ և նիւ. թոյ պարունակութիւնն: Վասն զի թէպէտ և ըստ բախտի ընտրուած էջերու նմանահանութիւն մ'է առ մեզ ուղարկուածն, այլ նոցա մէջ (Ձև 6) գրոշմուածն «Սրբոյն Կիւրղի հայրապետին ասացեալ է վասն կաղանդաց» գլուխն, և այն, որ կը յարունակուի նաև հանդի. պակաց էջին մէջ (Ձև 7), նոյն է ամենեկին ինչ որ վերը յիշատա. կեցինք Աղթարք գրոց մէջ տպուած յէջ 177 (թուղթ ժգ. գ.). այ. սու տարբերութեամբ միայն որ Տօնացուցի էջերն վերնագիր ունին «Կաղանդացոյց» բառն, իսկ Աղթարքի էջերուն վերնագիր դրուած է «Զկաղանդն-Ցուցանէ»: Այսպէս և Տօնացուցին վերոյեդեալ գ. բ. երեսին սկիզբէն (Ձև 6) մինչև «Սրբոյն Կիւրղի» տողն՝ Աղթարքի

մէջ յառաջ բերուած է յէջ 194 (թուղթ ԺԷ. Դ.) «Յաղագս ամպոց և երկնից նշանաց» խորագրոյն ներքև, էջերուն վերնագիր ունենալով «Զնշանքն-Յուցանէ» :

Մենք ձեռքերնիս ունեցած չենք «Տօնացոյցը», բայց այս երկու էջերու տառից և նիւթոց բաղդատութենէն միայն կրնանք հետեւցընել որ Տօնացոյցն կամ մի և նոյն Աղթարք գրոց տարբեր տպագրութիւն է, կամ փոքր ինչ աւելի կամ պակաս նմանութեամբ 'ի մի հաւաքուած նիւթեր՝ ըստ որում Աղթարքն, և Տօնացոյց կոչման ներքև հրատարակուած, եթէ յիշաւի այդ կոչումն վերաբերի ընդհանուր գրքին և ոչ գուցէ միոյ մասին : Բայց թէ արդեօք այս երկուքէն որն յառաջագոյն տպագրուած լինի, չկայ հաւաստի ապացոյց մի որոշելու : Գուցէ հաւանական ենթադրութիւնք յառաջ բերուին՝ եթէ ոք երկուքն 'ի միասին աչքի առջև ունենով՝ մանր բաղդատութեանց առնու :

Բաղդատելով այս գրքերու տառերը յաջորդ հայկական տպագրութեանց տառերուն հետ՝ և ոչ միոյն կրնանք նմանցընել այնչափ՝ որչափ գուցէ նմանին 1616 տարւոյն Քարմատանեան Յովհաննու ձեռքով յիշվով տպուած սաղմոսի տառերուն ձևին : Թէպէտ և վերջնոյս գրքերուն մեծութիւնն գրեթէ կիսով չափ մանր են քան վերոյ յիշեալ գրքերուն տառերը : Այս նմանութիւնն և տառերուն ընդհանրապէս խիստ անկիւնաւոր ձևերն ինձ այնպէս կարծել կու տան՝ թէ վերոյիշեալ առաջին տպագրութիւնքն եղած լինին լեհահայ գաղթականութեան ձեռքով, կամ յիշվով և կամ այլուր : Թէպէտ և չունինք այլ ինչ համոզիչ ապացոյց այս մեր կարծեաց հակառակողաց :

Այս գրքերու վրայօք խօսքս աւարտելէ յառաջ չեմ ուզեր մոռանալ յիշելու՝ որ Ուրբաթագիրքն ուղարկած է ընծայ մեր վանքի մատենադարանին Սերովբէ Էֆ. Մ. Ալիշան 'ի Կ. Պօլսէ, զոր և ինքնին բարեհաճեր էր ծանուցանելու յԱմսօրեայ Հանդիսի :

Այս երեք հայկական տպագրութեան երախայրեաց նախորդ և կամ ժամանակակից՝ պէտք չէ մոռնանք յիշելու 1472 տարւոյն մէջ Collège de France ակադեմիային ձեռքով 'ի փարիզ հրատարակուած բաղմալեզու քերականութիւնն, յորում քանի մի էջ տպագրուած է նաև հայերէն տառերով : Նմանապէս և 1536 թուին՝ փառիայի մէջ Ամբոս Թեսէոսի արևելեան լեզուաց տարբերքն (Introductio in chaldaicam linguam, syriacam atque armenicam, et decem alias linguas. Characterum differentium alphabeta, circiter quadraginta et eorumdem invicem conformatio), յորում յառաջ կր բերուին հայերէն տառերով բաղմալիւ անուններ և օրինակներ 'ի հին թարգմանութեանց, մանաւանդ 'ի Ս. Գրոց :

Այս հրատարակութիւնք եղան ուրեմն հայկական տպագրութեան երախայրիքն, և եթէ ներելի է ասել՝ պիտի մնան նաև իբրև նախա-

պատմական ժամանակի մնացորդք, քանի որ իրենց ծագումն դեռ  
ևս անյայտ մնայ մեզ: Այս հրատարակութիւնք ոչ իրենց սկզբնաւո-  
րութեամբ՝ իբրեւ առանձին անձի փորձեր, և ոչ ձեռնարկի կարեւ-  
րութեամբ՝ իբրեւ անօգուտ (մանաւանդ թէ մահամբ մի ֆրասակար  
և ուսմկին սնոտիապաշտութեան տածիչ գրքեր), չեն կարող հայ



Աղաթ քիմովսէս Բոյաբնայ: ՏԹ  
Ք Բյաղթութենէ առ հարստակորդաց պալատէն

Մայաւեն եղեր մեզ յազգե յ  
ազգ-միւս չէ լերինք հաստ  
ատեալին. ստեղծ եր զերկիրն զա  
մենայն տիեզերս:

Ս աւիտենից մինչև յաւիտեանս  
դուես. և մի դարձ. ուղաներ զմարդ  
ի առաւուրս և ասացեր դարձար

Ձև 8.

տպագրութեան պատմութեան մէջ փառաւոր տեղ գրաւել, Հայկա-  
կան տպագրութիւնն իւր փառաւոր ծագումն պիտի մատնանի, առնէ  
միշտ յանձին Արգար Դպրի՝ հայ Գուտտեմբերկի, որոյ ձեռնարկն ոչ  
միայն նիւթոյն կարեւորութեամբ (Սաղմոսաց տպագրութիւն) օգտա-  
կար և սրբազան է, այլ և իւր հետ միացեալ կրէ Հայաստանեայց

կաթողիկոսական և Հռովմայ կեդրոնական մեծամեծ դահուց հանդիսաւոր օրհնութիւնն, ճիգն և աշակցութիւնն, ինչպէս և վենետիկի վսեմափայլ Դքսին վաւերացուցումն:

Աւելորդ կը համարիմք աստ երկարօրէն 'ի մէջ բերել այս Աբգարու ամենամեծնօթ երկանց և ձեռնարկութեանց պատմութիւնն, նորա 'ի Հռովմ ուղարկուիլն իբրև պատգամաւոր Հայաստանեայց եկեղեցւոյն, անդ գտած սիրալիր ընդունելութիւնն և ձեռննտուութիւնն, և հուսկ ուրեմն 1565 թուին՝ վենետիկի մէջ Հայ տպագրութեան յաջողիլն: Նորա 'ի Կ. Պօլիս դարձն և անդ ևս տպագրութեանց հիմն դնելն: Աբգարու կենաց և գործոց, ինչպէս նաև նորա Սուլթանշահ որդւոյն պատահարք, քաջամանօթ են առ բանասէրս: Իսկ փափաքողաց նոցա մասին տեղեկութիւն ստանալ՝ ցոյց կու տամք Չամչեանի Հայոց Պատմութիւնն (Հտ. Գ. էջ 657-64), Մեծ. Հ. Դ. Ալիշանի «Յուշիկք Հայրենեաց Հայոցն» (Հտ. Ա. էջ 518-37), Մեծ. Հ. Գարեգին Զորբանեկեանի «Պատմութիւն Հայերէն Դպրութեանց» (Հտ. Բ. էջ 274-83), «Փորձ» ամսագրի՝ Աղ. Երիցեանի յօդուածն (1881, Ե. Տարի, էջ 1-32), Բաղմավէպ ամսագրի յօդուած մի (1850, էջ 232-4):

Մենք 'ի ձեռին ունելով Աբգարու առաջին տպագիր Սաղմոսի օրինակ մի, թէպէտ և պակասաւոր 'ի սկզբանն և 'ի վերջն, և քանի մի թերթ նաև 'ի մէջն, չենք կարող՝ բազդատելով զայն վերոյիշեալ հին տպագրութեանց հետ՝ չգարմանալ Սաղմոսի ճաշակով և սակաւաթիւ սխալանօք եղած գեղեցիկ տպագրութեան վրայ: Բայ միայն զարդագրերու և պատկերաց մասին, այլ նաև տառերու վայելչութեան, ինչպէս նաև բառերու և տողադարձ վանկերու կանոնաւոր բաժանման նկատմամբ: Մեր ընթերցողաց հետաքրքրութիւնը դժ. հացընելու նպատակաւ՝ կը դնենք այս տեղ նոյն Սաղմոսին երեսի մը նմանահանութիւնն (Չև 8), յորում կ'երևին երկու տեսակ (մեծ և փոքր) տառից ձևերն, և պատկերաց և զարդագրերու ճաշակ մի: - Նոյն Սաղմոսին վերջին թղթերէն մէկուն վրայ, առընթեր սկզբնագիր զարդագրի մը՝ դրոշմուած է և այս նշանն (Չև 9), որ գուցէ Աբգարեան տպագրատան յատուկ նշանն կարծուի, եթէ չուզենք զայն իբրև թարմատար զարդ համարիլ:

Այս Սաղմոսին տառերով տպուած են Աբգարու ձեռնարկութեամբ 'ի Կ. Պօլիս՝ Մաշտոց, Ժամագիրք և Պատարագամատոյց, 1568 թուին, որոց քանի մի օրինակք կը պահուին նաև 'ի մատենադարանի վանացս:

Այս Աբգարեան տպագրութեանց վրայ եթէ աւելցնենք նաև նորա որդւոյն՝ վերոյիշեալ Սուլթանշահի ձեռքով 'ի Հռովմ եղած՝ Գրիգորեան նոր տոմարի տպագրութիւնն՝ յամին 1584, և Տէրզնցւոյ Յովհաննու ձեռնարկութեամբ՝ երկրորդ անգամ 'ի վենետիկ տպուած

Սաղմոսարանն՝ յամին 1587, կրնանք կնքուած համարիլ զառաջին դար հայկական տպագրութեանց. վասն զի անկէ ետքը բառական երկար ատեն այլ ևս չի լսուիր ճոնչին հայ մամուլոյ, մինչև ցամն 1616,



ՁԼ 9.

յորում հայկական տպագրութեան երկրորդ դարուն առաջին ձեռնարկն տլ նմանապէս Սաղմոս գրքով կը սկսի յիլլով, վերոյիշեալ ֆարմատանեան տպագրատան մէջ.

Այսպէս ուրեմն յՁ դարու մէջ հեռաւոր արեւելից անկիւն մի, և անգրական ու կէս բարբարոս տարրներէ շրջապատեալ և տառապեալ ազգ մի, կարող է ներկայիս պարծիլ իւր նոյն դարու նախնեաց լուսամիտ և մեծահոգի տաժանմանց վրայ, որովք աշխարհներ կտրելով, և հայանիլ աշխարհածաւիթ և անտեղիտայի երկայնամիտու.

թեամբ՝ հազարումէկ զոհերու համբերելով, կրցաւ արեւելեան ազգաց մէջ, ինչպէս նաև արեւմտեան շատ ազգերէ կանուխ՝ տպագրական հնութեամբ՝ առաջին մրցանակն ստանալ, և զնոյնն զարգացընեւ ոչ ինչ նուազ գովելի ջանիւք մինչև ներկայ ժամանակս:

Հ. Ա. ՏՐՈՅԵԱՆ

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՏԱՐԱՐ ԹԱՐԳՄԱՆԵՑ ԵՒ ԼՈՒՍԱՐԱՆԵՑ

ԽՈՐԷՆ ԾԱՅՐԱԳՈՅՆ Վ. ՍՏԵՓԱՆԷ

(16°, Առաջաբան էջ ՃԲԺ. Երես 304. Ծանօթ. եւ Յաշեղ. էջ 328)

ԳԻՆՆ Է՛ ԲԲ. 1: 30

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ 1889

Ի. ՍԿՕՐՕԻՕԴՕՎԻ ՏՊԱՐԱՆ